ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

25 հունվարի.....2016 թվականի N.10-Ա

ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 11.03.2002թ. թիվ 225 որոշումը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 395-Ա և հունիսի 24-ի թիվ 263-Ա հրամանը, աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՀՊ/Ց2-001 եզրակացությունը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ Ֆ-395/15 գրությունը և «Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի 17.12.2015թ-ի «Արձանագրություն»-ը՝

Հրամայում եմ

1. «Օթիենթ Սթոն» ՍՊԸ-ի շահագործման նպատակով՝ ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինի և կավերի հանքավայրի <Օրիենտալ> տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման 2013 թվականի մայիսի 18-ի թիվ ՇԱԹՎ-29/469 թույլտվության մեջ «1.X=4416068 Y=8476414, 2.X=4416183 Y=8476421, 3.X=4416183 Y=8476555, 4.X=4416068 Y=8476557 » կոորդինատները փոխարինել՝ «1.X=4416034 Y=8476280, 2.X=4416149 Y=8476287, 3.X=4416149 Y=8476421, 4.X=4416034 Y=8476423 «ARM WGS-84» կոորդինատային համակարգի» կոորդինատներով:

2. Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 5-օրվա ընթացքում օրենքով սահմանված պահանջների ապահովմամբ նախապատրաստել հրամանի 1-ին կետից բխող փոփոխությունների կատարումը օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման թիվ ՊՎ-469 պայմանագրում և թիվ Լ-469 լեռնահատկացման ակտում,

2) ծանուցել ընկերությանը՝ հրամանը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունը իր կողմից վավերացնելու մասին,

3) լիազոր մարմնի և ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի (թույլտվություն, ընդերքօգտագործման պայմանագիր, լեռնահատկացման ակտ) փոփոխված տարբերակը:

3. Սահմանված ժամկետում ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի փոփոխված տարբերակը չստանալու դեպքում լիազոր մարմինը կառաջնորդվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468 հոդվածի պահանջներով:

4. Ընկերության կողմից ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի վավերացումից հետո, ապահովել համապատասխան գրառումների կատարումն ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման համապատասխան գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ